«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկանվարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա' Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործնթացում.

Դաստիարակ՝ Մաքրուհի Ավետիսյան
Մանկապարտեզ՝ «53» ՀՈԱԿ

2022թ.

Բովանդակություն

Ներածություն……………………………………………………………………… 3

Ամանոր……………………………………………………………………………….. 4

Տերունական տոներ……………………………………………………………… 4

Տաղավար տոներ…………………………………………………………………. 4

Ծեսերի ժամանակացույց…………………………………………………….. 5

Օրինակելի պարապմունք……………………………………………………… 7

Եզրակացություն…………………………………………………………………. 10

Օգտված գրականություն……………………………………………………… 11

Ներածություն

<u>Ազգային տոն,</u> ազգի օր կամ ազգային տոն, պաշտոնապես հաստատված պետության կամ ազգի տոն, որը ավելի հաճախ կապված է պետության ձևաորման և նրա ինքնիշխանության հետ: հայոց ազգի տոները, տարբեր ժամանակներում տարբեր դրսևորումներ և վերաիմաստավորումներ է ունեցել: Հայկական մշակույթը հնուց ի վեր, մինչ օրս էլ աչքի է ընկնում իր բազմաթիվ և յուրօրինակ ազգային տոներով:

Մենք բոլորս էլ նշում ենք այս տոները:

- Սուրբ Զատիկն ու Անահիտ աստվածուհին.

Այս համարվում է եկեղեցական 5 տաղավար տոներից մեկը և այս օրն ամբողջ քրիստոնյա աշխարհը տոնում է Քրիստոսի հարությունը, իրար հայտնելով ավետիսը' «Քրիստոս հարյավ ի մեռելոց» և ի պատասխան ստանալով «Օրհնյալ է հարությունը Քրիստոսի»:

- Վարդավառը ու Աստղիկ աստվածուհին
- Մարիամ Աստվածածինն ու Անահիտը
- Տիրոջն ընդառաջ կամ Տրնդեզ
- Ծաղկազարդ թե ծառազարդար

Դեռ վաղ տարիքից երեխաները պետք է ճանաչեն իրենց ազգային տոները և ունենան պատկերացում մեր դրանց անցկացման վերաբերյալ :Մանկապարտեզում ծեսերի իրագործման գլխավոր նպատակներից մեկն էլ այն է, որ ազգային մշակույթի արժեքները Չմոռացվեն: Քանի որ մոտենում է Ամանորը, ես որոշեցի մի գեղեցիկ ամանորյա միջոցառում կազմակերպել և էլ ավելի հետաքրքիր դարձնել մեր հրաշք փոքրիկների առօրյան: Ի վերջո մենք բոլորս էլ անհամբերությամբ ենք սպասում ամանորյա հրաշքին:

Տոնը երեխայի կյանքի կարևորագույն երևույթներից է, ուրախալի իրադարձություն, որը թույլ է տալիս թուլանալ ազատվել բացասական էներգիայից: Ամանորը' ընտանեկան տոն է և այն նշելու գեղեցիկ ավանդույթներ են ձևավորված :Երբ ասում են Տոն, երեխան հասկանում է զվարճանք: Տոները հոգևոր իմաստով հարստացնում են գիտելիքներն ու աշխարհայացքը, թույլ են տալիս ճանաչել ու վերականգնել հին ավանդույթները: Չէ որ մանկության տարիների ստացած տպավորությունները հաճախ ուղեկցում են մեզ ամբողջ կյանքում:

Ամանոր

«Ամանոր» նշանակում է Նոր տարի, կոչվում է նաև կաղանդ կամ Տարեմուտ: Ողջ աշխարհում ամենից սիրված, սպասված և ամենաուրախ տոնն է Ամանորը: Տարբեր ժողովուրդներ ունեն աշխարհում ամենից սիրված, սպասված և ամենաուրախ տոնն է Ամանորը: Տարբեր ժողովուրդներ ունեն ամանորյա բազում գեղեցիկ սովորություններ որոնք այն դարձնում են հետաքրքրական, անմոռանալի խորհրդանշելով գալիք տարվա հաջողությունը:Եկեղեցու տոները կոչված են հոգևոր խորհուրդներով օժտելու և կարգավորելու ժամանակը՝ տարին բաժանելով հատուկ շրջանների, որոնք յուրօրինակ հոգեղեն իմաստ են հաղորդում քրիստոնյայի կյանքին: Տոն, եկեղեցու կյանքի դարավոր տարեգրության յուրօրինակ արտահայտությունն է:

Տերունական տոներ

Տերունական տոներն են Քրիստոսի գլխավոր տնօրինությունների հիշատակները Աստվածահայտնությունները Հարությունը և Այլակերպությունը: Այս տոները, ունենալով հանդերձ իրենց որոշակի օրերը, նաև շարունակելի տոնախմբական ժամանակաշրջաններն են: Աստվածահայտնությունը մեր եկեղեցին տոնում է հունվարի 5-ին, սակայն, ըստ հնավանդ կարգի, մինչև հունվարի 13-ը մինչև Անվանակոչություն համարվում է Աստվածահայտնության տոնախմբական շրջան ութօրեք: Հարությունը տևում է 64 օր՝ ընդգրկելով Քրիստոսի կյանքի բոլոր վերջին տնօրինությունները՝ Ղազարոսի հարությունը, Ծաղկազարդը, Ավագ շաբաթը, Ջատիկը, Համբարձումը և Հոգեգալուստը: Իսկ Այլակերպությունը տոնվում է 3 օր:

Տաղավար Տոներ

Տաղավար անունը կապված է Հին Կտակարանում նկարագրվող գլխավոր տոներից մեկի Աշնանային բերքահավաքին նվիրված Տաղավարահարաց տոնի հետ, որը նշել են մի քանի օր շարունակ բացօթյա տաղավարներում: Այդ պատճառով էլ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հինգ գլխավոր տոները կոչվում են Տաղավար տոներ: Դրանք են Սուրբ Ծնունդ կամ Աստվածահայտնություն, Սուրբ Հարություն կամ Ջատիկ, Պայծառակերպություն կամ Վարդավառ, Սուրբ Աստվածածնի Վերափոխում և Խաչվերաց: Այդ օրերին եկեղեցիներում մատուցվում է Սուրբ Պատարագ: Տաղավար տոները շարժական են և միշտ նշվում են կիրակի օր. Միայ Սուրբ Ծննդյան տոնն է անփոփոխ կերպով տոնվում հունվարի 6-ին:

Ծեսերի ժամանակացույց

Նախադպրոցական և մանկական այլ հիմնարկներում մանկական տոնի կամ ծեսի կազմակերպիչն ու ակտիվ մասնակիցը մեծերն են՝ դաստիարակ, դայակ, ծնող տատ ու պապ: Այսինքն՝ տոնը բնական, կենդանի պիտի լինի խ, ինչպես եղել և կա իրականում՝ մեծով- փոքրով: Տոն – ծեսը ներկայացում չէ, երեխան էլ խամաճիկ չէ, որ խաղացնենք ու զվարճանանք նրանով: Այն կենսաձև է, կյանքի որոշ հատված. ծեսը չեն խաղում: Երեխան պիտի իրական տոնի մասնակիցը լինի, վայելի այն: Տոնն էլ բոլորի համար է հանդիսատեսը (պասիվ դիտող ծնողը, հյուրը) կապ չունի ո՛չ տոնի և ոչ էլ երեխայի հետ:

Երեխան միջոց չէ մեծերի ինչ- ինչ ցանկություններ, հավակնություններ բավարարելու համար: Ծեսը նաև հաշվետվություն է, ընթացքում սովորածի «ժողովածու», ամփոփում:

4-6 տարեկան երեխան ծնողի, դաստիարակի, ուսուցչի հետ ամբողջական ծեսի մասնակցելով, յուրացնելով ծեսի նյութը, դառնում է այդ նյութի կրողը, զարգացնողը: Հետագայում նա հեշտությամբ և գիտակցմամբ կյուրացնի իր ժողովրդի և համաշխարհային գրականությանը, արվեստը, պատմությունը, արժեքային համակարգը. Այդ նյութը կնպաստի գիտակցաբար գնահատել ճշմարիտ արժեքները:

Ծեսի իրականացումը, որն իր մեջ ներառում է երգ-պար, բանահյուսություն, գրականություն, կերպարվեստ-ձեռարվեստ, թատրոն, խաղ, պատմություն և այլն, ամբողջական կրթության իրագործում է: Համայրա բոլոր ծեսերը երկու բաժնից են կազմված՝ «Ծիսական օրեր, ծիսական եռուզեռ», և «Ծիսակատարություն»: Նշված բոլոր երգերը կան«Երգարան», խաղերը՝ «խաղադարան» ժողովածուներում:

Առաջին բաժնում ծեսի ընթացքն է նկարագրվում, երկրորդում՝ ծիսակատարությունը: Մենք առաջարկում ենք բոլոր ծեսերը՝ արարողություններով, ավանդույթներով, սովորություններով:

Մանուկների համար առաջարկում ենք հետևյալ տոնացույցը

Ամանոր	Տոնվում է հունվարի մեկին և հաջորդ օրերին:
Տյառնընդառաջ	Փետրվարի 14
Բարեկենդան	Տոնվում է Զատիկից յոթ շաբաթ առաջ, կիրակի օրը, կոչվում է Բուն Բարեկենդան: Ծեսն սկսվում է Բուն

Բարեկենդանից երկու շաբաթ առաջ: Այդ ընթացքում ամեն օրը տոնական, իսկ հիմնական ծեսը նշում են Բուն Բարեկենդանի օրը :

Մեծ Պաս

Սկսվում է Բուն Բարեկենդանի հաջորդ օրվանից, տևում է յոթ շաբաթ: Այդ ընթացքում արգելվում է կենդանական ծագում ունեցող կերակուր ուտել: Պասը «հսկում է» Ալկատիզը երդիկից կախված սոխե գլխով տիկնիկ-պապը: Այս օրերին խոհանոցում հաճախ միասին պասի կերակուրներ են պատրաստում

Միջինգ կամ միջենգ Թխում են պասի 4-րդ շաբաթվա չորեքշաբթի օրը:

Ծառազարդար-Ծաղկազարդ Տոնվում է Զատիկի նախորդ շաբաթվա կիրակի օրը:

Զատիկ Տոնում են գարնանային օրհավասարային հաջորդող լուսնի լարման հաջորդ կիրակի օրը: Շարժական ծես է, եկեղեցու տոնացույցով հաշված և որոշված օր է:

Համբարձում Տոնվում է Զատիկի ծեսից 40 օր անց՝ հինգշաբթի օրը:

Վարդավառ Տոնում են Զատիկից 98 օր հետո, կարող է ընկնել հունիսի 2-րդ կեսից օգոստոսի առաջին կեսը՝ կիրակի օր: Հայաստանի շատ շրջաններում տոնվում է հուլիսի 22-ին հաջորդող կիրակի օրը:

Աշնանացան Ցորեն ցանելու ծես, որը տևում է մոտ երկու շաբաթ՝ Հոկտեմբեր ամսվա ընթացքում: Նույն կերպ կարելի է գարնանացան անել ապրիլ ամսին:

Գարնան ծես Սկսվում է փետրվարի վերջին օրվանից, ավարտվում մայիսի վերջին՝ Համբարձման ծեսով:

Երեխատոն երեխաների պաշտպանության օրը՝ հունիսի 1-ին:

Ծննդյան օր	ծննդյան օրվա ծես:
Մայրիկատոն	ապրիլի 7-ին' մայրության և գեղեցկության տոն:

Օրինակելի Պարապմունք

	Խումբ	Թեմա	Տևողությունը
Խոսքի զարգացում երաժշտություն	**Միջին**	**Ամանոր և Սուրբ ծնունդ**	**35-40 ր.**

Պարապմունքի Նպատակները

- Սովորեցնել տոնի մասին ճիշտ պատկերացում կազմել:
- Զարգացնել կապակցված խոսքը և արտահայտելու կարողությունը:
- Ամրապնդել տոնի մասին երեխաների գիտելիքները
- Ճշգրիտ կատարել հրահանգները
- Զարգացնել ինքնուրույնությունը, աշխատանքը ավարտին հասցնելու կարողությունը:
- Խթանել հասակակիցների հետ հաղորդակցությունը.
- Օգնություն առաջարկել հասակակցին
- Ընդունել հասակակցի օգնությունը
- Անհատական աշխատանք
- Փոքր խմբով աշխատանք
- Զույգերով աշխատանք

Նյութեր

<u>Մեծադիր ցուցադրական նյութեր</u>

- Նկարներ
- Դիդ նյութեր

- Նյութեր երեխաների թվով

Խթանման փուլ ***<u>Ընթացքը</u>***

Երեխաները ձեռքերին խաղալիք մոմերը վառված,երաժշտության տակ մտնում են դահլիճ, շրջանաձև կանգնում և աղոթք են ասում

- Երեխաներ, Ամանորյա հրաշքը սկսվեց և մեզ բոլորիս ավետեց Սուրբ ծննդյան գալստյան ավետիսը:
- Երեխաները երգում են «Թող հնչեն զանգերն ի լուր» երգը.
- Երեխաները տեղավորվում են գորգին շրջանաձև նստում.
- Առաջինը Հիսուս Քրիստոսի գալստյան լուրը իմացան հովիվները

Իմաստի ընկալման

Փուլ

- Դաստիարակը մեծ նյութերով ցույց է տալիս Ամանորը, Սուրբ ծնունդը, առաքյալներին, հրեշտակների հայտնվելը:
- Ձմեռ պապիկի եղնիկներով սլացող նկարները
- Երեխաներ նկարագրեք, թե որտեղից է գալիս Ձմեռ պապիկը.
- Տարին քանի անգամ է մեզ մոտ գալիս .
- Եկեք մի գեղեցիկ երգ էլ կատարենք որպեսզի Ձմեռ պապիկը լսի և գա.
- Երգ –«Ալո – ալո Ձմեռ պապի».
- Երեխաներ եկեք կանչենք ձմեռ պապիկին
- Ձը-մեռ-պա-պի, Ձը-մեռ-պա-պի
- Ներս է մտնում Ձմեռ պապիկը պարկը ուսին
- Ձմեռ պապիկը երեխաներին առաջարկում է միասին զարդարել եղևնին և ունենան Ամանորյա տոնածառ
- Երեխաները մեկը մյուսին օգնելով և ոգևորությամբ զարդարում են եղևնին
- Ձմեռ պապիկը վերջում միացնում է լույսերը տոնածառի Դ երեխաների հետ շրջան բռնում երգում ու պարում:

Կշռադատման

Փուլ, Ամփոփում

- Երեխաներ ինչ գիտեք Սուրբ Ծննդի մադին
- Ի՞նչ է Հիսուս Քրիստոսի մոր անունը.
- Առաջինը ո՞վքեր իմացան Հիսուսի ծնվելու լուրը.
- Ո՞վ է այսօր մեզ հյուր եկել.
- Ձմեռ պապիկը ի?նչ է մեզ բերել.

Դաստիարակի խոսքերը

- Ապրեք երեխաներ դուք շատ բան գիտեք Սուրբ Ծննդի և Ամանորի մասին, Ձմեռ պապիկը կկատարի Ձեր բոլորի երազանքները:

  Ձմեռ պապիկը բաժանում է նվերները երեխաներին:

1.Դիտարկող – Տնօրեն – Այս պարապմունքի միջոցով երեխաները մեծ գիտելիքներ ստացան Սուրբ ծննդի և Ամանորի մասին: պ/ք-ն անցավ ուրախ և աշխույժ մթնոլորտում:

1.Դիտարկող – մեթոդիստ - Երեխաները շատ ուրախ էին , ոգևորված պատասխանում էին առաջադրված հարցերին: Շատ ակտիվ կոնտակտ կար դաստիարակի և երեխաների միջև:

3.Դիտարկող – Դաստիարակ – Այս թեման շատ կարևոր է յուրաքանչյուր երեխայի համար: Երեխան փոքրուց պետք է իմանա Սուրբ Ծննդյան հրաշքի կարևորությունը և պետք է դաստիարակվի հայեցի:

Եզրակացություն

Այսպիսով, մենք խոսեցինք Ազգային տոների , ծեսերի կազմակերպման առանձնահատկությունների դերը կրթական գործում:Այս աշխատանքը ես իրականացրեցի միջին խմբում, դիտարկողները դիտում էին պարապմունքի և եկան հետևյալ վերլուծությանը: Որ երեխաները ակտիվ էին, կար կոնտակտ դաստիարակի և երեխաների մեջ, պատասխանում էին առաջադրված հարցերին:

1.Հետազոտությունից հետո ես ինձ համար հայտնաբերեցի, որ չնայած երեխաները 4-5 տարեկան էին, բայց լիովին հասկացան տոնի իմաստը և կարևորությունը:

2. Ես նպատակ էի դրել իմ առաջև, որ երեխաները դեռ փոքր տարիքից ընկալեն ու հասկանան հայ ժողովրդի տոների և ծեսերի իմաստը և հասա դրան:

3.Դաստիարակներին խորհուրդ կտամ հաճախ անցկացնել օրինակելի պարապմունքներ նվիրված մեր Ազգային տոներին:

4.Մանկապարտեզից պետք է սկսենք մեր ազգայինը պահել և պահպանել:

Օգտված գրականություն

1. **Հայը և իր երգը – Սիլվա լ. Տեր Ստեփանյան – 2011թ.**
2. **Մանկապարտեզի միջին խմբի 4-5 տարեկանների կրթական համալիր ծրագիր – 2011թ.**
3. **Մանկական Քրիստոնեական հանրագիտարան – 1988թ (Արեգ)**